# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 142- Ա 18 փետրվարի 2016 թ.

## <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ Պ. ՂԱՆԴԻԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի N 6 ՀՐԱՄԱՆԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.5-րդ կետի <<ժա>> ենթակետի, 1.6 կետի դրույթներով

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N396-Ն հրամանով հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի>> 15-րդ կետի և 16-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների խախտման պատճառով անվավեր ճանաչել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2015 թվականի հունվարի 22-ի N 6 հրամանը:
2. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Հակոբյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունել սույն որոշումից բխող իրավական ակտ և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ